# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/144-1»

**ք. Տաշիր** **«15» «հունվարի» 2026թ.**

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Թովմասյանի, որը գործում է «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ-ն կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների*** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ Կատարողը՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնում է օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

**2.4.5 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝**

**ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,**

**բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին**

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3945000 (երեք միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, **ապա մատուցված ծառայությունների դիմաց ըստ սուբվենցիոն ծրագրի համայնքային մասնաբաժնի մասով իրականացվում է հանձման-ընդունման արձանագրության ստորագրումից 30 օրվա ընթացքում, իսկ պետական մասնաբաժնի վճարումն իրականացվում է սուբվենցիոն ծրագրով ֆինանսական միջոցների տրամադրումից հետո:**

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի

կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան** | **«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ** |
| **ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94** | **ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր, Նալբանդյան 5/3-2** |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **ՀՎՀՀ 06946973** |
| **Հ/Հ 900272423014** | **Հ/Հ 1150020839439408** |
| **ՀՎՀՀ 06966995** | **«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ** |
| | **Տնօրեն՝ Նարեկ Թումանյան** |
| ________ **Է. Արշակյան** | ________ |
| **(ստորագրություն)** | |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությամբ չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
«15» « հունվարի » 2026թ. կնքված
№ «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/144-1»
ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 71241200/ 507 | Ստորև | դրամ | 3945000 | 1 | ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 | Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.02.2026թ. |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
## ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

| ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Ապավեն, Արծնի, Լեռնահովիտ, Ձորամուտ, Մեծավան, Նորաշեն, Պաղաղբյուր, Սարչապետ բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալարկմամբ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ | |
|---|---|
| ***Ծրագրի անվանումը*** | ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Ապավեն, Արծնի, Լեռնահովիտ, Ձորամուտ, Մեծավան, Նորաշեն, Պաղաղբյուր, Սարչապետ բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալարկմամբ վերանորոգում |
| ***Ֆինանսավորման աղբյուր*** | Համայնքային և պետական բյուջեներ |
| ***Պատվիրատու*** | ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան |
| ***Ծառայությունների անվանումը*** | ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Ապավեն, Արծնի, Լեռնահովիտ, Ձորամուտ, Մեծավան, Նորաշեն, Պաղաղբյուր, Սարչապետ բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալարկմամբ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ |
| ***Երթևեկամասի ծածկի տեսակը*** | Գրունտային |
| ***Ճանապարհահատվածի անվանումը*** | **Ապավեն բնակավայր՝**<br>1-ին փողոց 4-րդ նրբանցք,<br>**Արծնի բնակավայր՝**<br>1-ին փողոց,<br>**Լեռնահովիտ բնակավայր՝**<br>5-րդ փողոց, 1-ին նրբանցք,<br>9-րդ փողոց, 5-րդ նրբանցք,<br>9-րդ փողոց, 6-րդ նրբանցք |

| | |
|---|---|
| | 9-րդ փողոց 7-րդ նրբանցք,<br>10-րդ փողոցի 2-րդ նրբանցքից 11-րդ փողոց 1-ին նրբանցք,<br>10-րդ փողոց,<br>**Ձորամուտ բնակավայր՝**<br>4-րդ փողոց<br>**Մեծավան բնակավայր՝**<br>Հ. Այվազյան փողոց,<br>Խ. Աբովյան փողոց,<br>**Նորաշեն բնակավայր՝**<br>Մ. Մելքոնյան փողոց,<br>Ռ. Բաղդասարյան փողոց,<br>Վազգեն Առաջինի փողոց,<br>Գ. Նժդեհի փողոց,<br>**Պաղաղբյուր բնակավայր**<br>1-ին փողոց<br>**Սարչապետ բնակավայր**<br>1-ին փողոց, 3-րդ նրբանցք<br>4-րդ փողոց |
| *Հատվածը՝* | **Ապավեն բնակավայր**<br>1-ին փողոց, 4-րդ նրբանցք, կմ 0.00+0,170<br>**Արծնի բնակավայր**<br>1-ին փողոց, Կմ 0,00+0,313-կմ 0,00+0,460<br>**Լեռնահովիտ բնակավայր**<br>5-րդ փողոց, 1-ին նրբանցք՝ կմ 0,00+0,200<br>9-րդ փողոց, 5-րդ նրբանցք՝ կմ 0,00+0,310<br>9-րդ փողոց, 6-րդ նրբանցք՝ կմ 0,00+0,333<br>9-րդ փողոց 7-րդ նրբանցք՝ կմ 0,00+0,37<br>10-րդ փողոցի 2-րդ նրբանցքից 11-րդ փողոց 1-ին նրբանցք՝ կմ 0,00+0,33<br>10-րդ փողոց՝ կմ 0,00+0,110<br>**Ձորամուտ բնակավայր**<br>4-րդ փողոց՝ կմ 0,00+0,120<br>**Մեծավան բնակավայր**<br>Հ. Այվազյան փողոց, կմ 0,00+0,200<br>Խ. Աբովյան փողոց, կմ 0,00+0,500<br>**Նորաշեն բնակավայր**<br>Մ. Մելքոնյան փողոց, կմ 0,00+0,170-կմ 0,00+0,280<br>Ռ. Բաղդասարյան փողոց, կմ 0,00+0,520-կմ 0,00+0,740<br>Վազգեն Առաջինի փողոց, կմ 0,00+0,145-կմ 0,00+0,245<br>Գ. Նժդեհի փողոց, կմ 0,00+0,240<br>**Պաղաղբյուր բնակավայր**<br>1-ին փողոց, կմ 0,00+0,220-կմ 0,00+0,320<br>**Սարչապետ բնակավայր**<br>1-ին փողոց, 3-րդ նրբանցք, կմ 0,00+0,110<br>4-րդ փողոց, կմ 0,00+0,590 |
| *Երկարությունը* | Ապավեն բնակավայր՝ 0.170կմ<br>Արծնի բնակավայր՝ 0.147կմ<br>Լեռնահովիտ բնակավայր՝ 1,653կմ<br>Ձորամուտ բնակավայր՝ 0.12 կմ<br>Մեծավան բնակավայր՝ 0.7 կմ<br>Նորաշեն բնակավայր ՝ 0,670 կմ<br>Պաղաղբյուր բնակավայր ՝ 0,1կմ<br>Սարչապետ բնակավայր ՝ 0.7 կմ |

| | |
|---|---|
| ***Նախագծման փուլը*** | Աշխատանքային նախագիծ |
| ***Ռիսկայնության աստիճանը*** | Միջինից բարձր (III կատեգորիա), |
| ***Հատուկ պահանջներ*** | • Նախագծման աշխատանքների սկզբում՝ տվյալ ճանապարհահատվածում գտնվող կամուրջի (կամուրջների) առկայության դեպքում իրականացնել այդ կամուրջների տեխնիկական վիճակի հետազննում և անհրաժեշտության դեպքում այդ կամուրջների մասով նախագիծը պատրաստել կամուրջի (կամուրջների) տեխնիկական վիճակի հետազննման արդյունքում տրված եզրակացության (ների) հիման վրա: |
| ***Ընդհանուր դրույթներ*** | • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն **<u>հայերեն և ռուսերեն լեզուներով</u>**՝ հինգ թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (**ACAD PDF** ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև **Excel** ֆորմատով **GHEA GRAPALAT** հայերեն տառատեսակով):<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի: |
| ***Հիմնական պարտականություններ և պահանջներ*** | ***Հիմնական պարտականություններ՝***<br>• Ինժեներական հետազննման աշխատանքների իրականացում:<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:<br>• Նախագծվող տեղամասի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և նախատեսվող աշխատանքների իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգտնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման նախագծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում:<br>•Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ շինարարական տեղամասերը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով:<br>***Հետազննման վերաբերյալ պահանջներ՝***<br>• Ինժեներական հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով,<br>• հետազննման ընթացքում հիմնանորոգման ենթակա ճանապարհի երկայնքով առնվազն **<u>յուրաքանչյուր 330 մետր տեղամասում, (իսկ նստվածքային տեղամասերում պարտադիր՝ առնվազն 2մ խորությամբ)</u>** կատարել հորատումներ՝ ճանապարհային պատվածքի շերտի հաստության, պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների ուսումնասիրման անհրաժեշտ խորությամբ և վիճակի գնահատում:<br>• հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:<br>***Նախագծերի նկատմամբ պահանջներ***<br>• Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:<br>• Գոյություն ունեցող կամուրջի (կամուրջների) տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ պետք է ներառված լինեն նաև այդ |

կամուրջի (կամուրջների) ուժեղացման, հիմնանորոգման, վերակառուցման հիմնավորված առաջարկությունները:

- Համայնքային ենթակայության օբեկտների /դպրոց, մանկապարտեզ, համայնքապետարան/ մուտքերի բարեկարգում:
- Նախագծերի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝
  - ✓ հողային պաստառի վերականգնում/վերակառուցում/նորոգում/կառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ հենապատերի վերականգնում/վերակառուցում/նորոգում/կառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ ճանապարհային պատվածքի հիմնանորոգում,
  - ✓ մայթերի և սիզամարգերի հիմնանորոգում/վերակառուցում/կառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ ջրահեռացման համակարգի վերականգնում/վերակառուցում/նորոգում /կառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ արհեստական կառուցվածքների վերականգնում/վերակառուցում/նորոգում/ կառուցում (ըստ անհրաժեշտության),
  - ✓ ճանապարհի կահավորում,
  - ✓ անվտանգության տարրերի, ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:

***Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝***

- Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝
  - ✓ բացատրագիր (որն իր մեջ կներառի տեղամասի վիճակի, հետազննման արդյունքների՝ այդ թվում նաև գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտի հաստության, գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտեզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենա - մեխանիզմների և ինժեներատեխնիկական մասնագիտական խմբի կազմերը),
  - ✓ ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելիեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),
  - ✓ գծագրեր (որոնք կներառեն՝ տախեոմետրական հանույթի հատակագիծը, այդ թվում՝ հենանիշերը իրենց կոորդինատներով, ճանապարհի երկայնական կտրվածքը, լայնական կտրվածքներ՝ յուրաքանչյուր 2
0մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, կահավորման և ջրահեռացման հատակագիծը, ճանապարհային

| | |
|---|---|
| | պատվածքի կոնստրուկցիայի գծագրեր կախված հարակից տարրերից),<br>✓ նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը),<br>✓ տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թվում՝ շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասերը լուսաազդանշանային առկայծող լապտերներով կահավորելու սխեման և այլն),<br>✓ ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքների՝ ըստ գրունտների կարգի, դրանց մշակման, տեղափոխման մեխանիզմների և աշխատանքի տեսակի, արհեստական կառուցվածքների՝ ըստ աշխատանքի տեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըստ ծածկի կոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կահավորման և անվտանգության տարրերի՝ ըստ աշխատանքի տեսակի),<br>✓ համահավաք ամփոփագրեր,<br>✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),<br>✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ):<br>***Համաձայնեցումներ՝***<br>• նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության հետ,<br>• համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ,<br>• տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,<br>• կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ: |
| ***Նորմատիվային պահանջներ*** | • Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 շինարարական նորմերով և ГОСТ 32836-2014-ի, ГОСТ 33179-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն:<br>• Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ГОСТ 32868-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն:<br>• Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ГОСТ 32869-2014-ի և ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերին համաձայն:<br>• Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ», ՀՀՇՆ 32-03.02-2024 «Կամուրջների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում, Հիմնական դրույթներ» շինարարական նորմերերի, ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն:<br>• Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն և 26.10.2006թ. թիվ 1699 որոշումներով սահմանված կարգի համաձայն: |

| | |
|---|---|
| | • Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 17.10.2024թ.-ի թիվ 1656-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: <br>• Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21.701-2013, ГОСТ 21.101-99, ГОСТ 21.501-2018 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն: |

**Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ նախագծող կազմակերպության կողմից:**

**Կատարողը նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներկայացնի համապատասխան լիցենզիա ունեցող անձի (կազմակերպության) փորձաքննությանը և Պատվիրատուին նախագծանախահաշվային փաստաթղթերը տրամադրի փորձաքննված տարբերակով:**

**Նախագծերի լրամշակումը՝ ըստ անհրաժեշտության (եթե փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»), նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 5-օրյա ժամկետում:**

**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները Պատվիրատուի կողմից ամբողջությամբ կընդունվի և դրա դիմաց վճարումները կիրականացվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:**

**Կատարողը պարտավոր է սուբվենցիոն ծրագրի հաստատումից հետո, շինարարության թույլտվության տրամադրման փուլում ծանուցումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում ապահովել նախագծանախահաշվային փաստաթղթերի https://urban.e-gov.am/hy/ հարթակում համապատասխան մասնագետների կողմից մուտքագրման և էլեկտրոնային թվային ստորագրության իրականացումը:**

| ***Ծառայության մատուցման ժամկետը*** | |
|---|---|
| ***սկիզբը*** | ***ավարտը*** |
| Պայմանագիրը /համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից | Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման ավարտը՝ մինչև 10.02.2026թ. |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**
**ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան**
**ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900272423014**
**ՀՎՀՀ 06966995**

**_______________ Է. Արշակյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ**
**ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր, Նալբանդյան 5/3-2**
**ՀՎՀՀ 06946973**
**Հ/Հ 1150020839439408**
**«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Տնօրեն՝ Նարեկ Թովմասյան**

**_______________**
**Կ.Տ.**

Հավելված N 2
«15» « հունվարի » 2026թ. կնքված
№ «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/144-1»
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/507 | ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Ապավեն, Արծնի, Լեռնահովիտ, Ձորամուտ, Մեծավան, Նորաշեն, Պաղաղբյուր, Սարչապետ բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալարկմամբ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

**Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա մատուցված ծառայությունների դիմաց ըստ սուբվենցիոն ծրագրի համայնքային մասնաբաժնի մասով իրականացվում է հանձման-ընդունման արձանագրության ստորագրումից 30 օրվա ընթացքում, իսկ պետական մասնաբաժնի վճարումն իրականացվում է սուբվենցիոն ծրագրով ֆինանսական միջոցների տրամադրումից հետո:**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան**
**ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900272423014**
**ՀՎՀՀ 06966995**

**_______________ Է. Արշակյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ**
**ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր, Նալբանդյան 5/3-2**
**ՀՎՀՀ 06946973**
**Հ/Հ 1150020839439408**
**«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Տնօրեն՝ Նարեկ Թովմասյան**

**_______________**
**Կ.Տ.**

**«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ**
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝374 10 592020
Ֆաքս՝
Էլ. փոստ՝info@amiobank.am

Տպված է՝14/01/2026 16:45 (UTC+04:00)

## Բյուջետային փոխանցում N 000753

| | | | |
|---|---|---|---|
| Ամսաթիվ | 14/01/2026 | Նույնացուցիչ | 22ddae72-eecb-40cc-ab1e-ba1eb984950a |
| Հաշիվ | 1150020839439408 | Գումար | |
| **Շահառուի հաշիվ** | 900008000664 | AMD | 1,199,000.00 |
| Վճարողի անվանում | **ԳԵՈՔԱՐՏ ՍՊԸ** | | |
| Վճարողի բանկ | **«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ** | | |
| ՀՎՀՀ | 06946973 | | |
| Տարածաշրջանի/ՀՏ կոդ | 31 | | |
| Շահառուի անվանում | **Տաշիրի համայնքապետարան** | | |
| Ինքնագրաղ անձ | **Ոչ** | | |
| Գումարը բառերով | **Մեկ միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար դրամ** | | |
| Նպատակ | **Պայմանագրի ապահովում ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԽԾՁԲ-25/144-2** | | |

| | |
|---|---|
| Ստորագրող | Narek Tovmasyan |
| Ստորագրության կարգ | I, II |
| Ամսաթիվ | 14/01/2026 16:43:28.190 |
| Սարքի անվանում | SMS |
| Սարքի սերիալ N | 37494905080 |
| Ստորագրություն | 41556 |

**Կատարված է**